պիտի մօտենալ. անպտուղ տեսական վիճաբանութիւններով չի կարելի հասնել ազգային պրոբլէմի վճռին. կառաղի, ապերախտ, բայց յոմառ աշխատանքով նպատակին հասնելու երաշխիքն է ձեռք բերւում:

Հայաստանը, պարոններ, արդէն ցոյց է տուել իր կենսունակութեան ապացոյցները. ես յոյս ունեմ, որ ձեր հայրենասիրական ջանքերը բոլոր գժուարութիւնները կը յաղթահարեն:

Ցնայելով, որ Հայաստանի սահմանները սկզբունքով որոշուած են, իր աշխարհագրական վիճակը դեռ վերջնականապէս կարգաւորուած չէ:

Պատերազմի ժամանակ բոլոր դաշնակիցների ջանքը ուղղուած էր միևնոյն նպատակին, պահանջում էր շտապ վճիռ:

Թէև խաղաղութեան հետ միասին, հակառակ նրա կայուն ու անյողդողդ հիմունքին, մենք տեսնում ենք երբեմն տատանումներ և զանազան շահերի տեսակէտից բղխող տարբերութիւններ, բայց դուք գիտէք, որ Ֆրանսան ձեր հնաւանդ պաշտպանն է, որ երբեք իր բարեկամութեան մէջ չէ թերացել: Միջդաշնակցական խորհրդի հովանու տակ դուք վստահ կարող էք լինել, որ դեմոկրատ Ֆրանսան միշտ ջերմօրէն կը պաշտպանի հայ դեմոկրատիայի դատը:

Կեցցէ Հայաստանը:

(Ֆրանսական ներկայացուցչի ճառը ծածկւում է բուռն ծափահարութեամբ):

Այնուհետև խօսք է ստանում պատգամաւոր Ար. Մաքսապետեանը. — Մի ամիս առաջ այսօր, պարոնայք պատգամաւորներ, թողնում էինք խորհրդարանը ծանր մղձաւանջի տակ՝ խորհելով, թէ արդեօք պիտի կարողանա՞նք դուրս գալ մեր երկրի համար ստեղծուած նոր վտանգից: Այսօր եկել ենք այստեղ և լսում ենք կառավարութեան հաղորդագրութիւնը, որի համաձայն մեր կառավարութիւնը կարողացել է փրկել երկիրը այդ վտանգից, այս խորհրդարանի գործնական աջակցութեամբ:

Խօսել յիշուած վտանգի և նրա դէմ ձեռք առնուած կտրուկ միջոցների մասին, այդ նշանակում է հաշուեյարդարը կատարել անցնող մի ամսուայ համար և նոր գործի սկսել՝ այս անգամին ևս կառավարութեան տալով լրիւ ազատութիւն, նրա ձեռքերը ազատել կաշկանդումներից, քանի որ գտնում ենք, որ մեր երկիրը դեռ պէտք ունի ամենիշնական, կտրուկ և գործնական քայլերի:

Այդ վստահութիւնը յայտնելով կառավարութեան՝ չմոռնանք, սակայն, այս խորհրդարանի իրաւունքն ու պարտականութիւնը. մի անգամ էլ անդրադառնալով անցեալին, վերջացող ամսուայ իրադարձութիւնների իրական պատճառներին և այդ բոլորը նկատի ունենալով, կատարենք մեր պարտականութիւնը, պարտադրենք կառավարութեանը կատարելու մեր կամքն ու թելադրանքները, և այդ բոլորի գործադրութիւններով ձգտենք հասնել նրան, որի համար աշխատել ու զոհուել են անցեալում և որի իրականացման համար մենք եկել ենք այստեղ:

Պ. Նախարարապետը խօսեց ու մանրամասն տեղեկութիւններ տուաւ իրենց կատարածի մասին. նա կարդաց նաև այն օրինագծերն ու վարկերը, որոնք սահմանուել են մայիս ամսի ընթացքին կառավարութեան միջոցներով՝ օգտուելով մեր կողմից իրենց տրուած իրաւունքներից:

Բայց միթէ՞ այդ կարգադրութիւններով ու սահմանած օրէնքներով երբ և իցէ կառավարութիւնը խորհում է փրկել մեր հանրապետութիւնը իրական վտանգից, որը «Թիկունքի վտանգ» անուանեցաւ նախորդ ճառախօսի կողմից: Եթէ ես առաջարկում եմ վստահութիւն յայտնել կառավարութեան,